Լինել ողորմության ներկայացուցիչը աշխարհում

Հրաշալի ողորմություն (մաս 8)

Հիսուս. «իմ վկաները կլինեք:» Գործք Առաքելոց 1:8

Այս անիրավ աշխարհում մեր մեծագույն վկայությունը ողորմած լինելն է

«Ողորմա՛ծ եղեք, ինչպես որ ձեր Հայրն է ողորմած:» Ղուկաս 6:36

Ողորմած լինելու սկզբունքները
Ինչպե՞ս կարող եմ լինել ավելի ողորմած

1. Լսիր և տես մարդկանց կարիքները

«Միայն ինքներդ ձեր շահերը մի՛ փնտրեք, այլ ամեն մեկն իր ընկերոջինը ևս:» Փիլիպպեցիս 2:4

«Հիսուսը սիրալիր նայեց նրան:» Մարկոս 10:21

2. Մի վիրավորվիր նրանց մեղքերից

«Ողորմա՛ծ եղեք թերահավատների հանդեպ: Փրկե՛ք նրանց՝ կրակից խլելով, իսկ ուրիշներին հանդուրժե՛ք երկյուղով՝ ատելով նույնիսկ նրանց աղտոտված պատմուճանը:» Հուդա 1:22-23
«Ամեն ինչից առաջ միմյանց նկատմամբ ջերմ սե՛ր ունեցեք, որովհետև սերը ծածկում է մեղքերի շատությունը:» Ա Պետրոս 4:8
«Ամենայն խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, սիրով միմյանց հանդուրժելով:» Եփեսացիս 4:2

Մի սպասիր, որ անհավատները վարվեն հավատացյալների պես, քանի դեռ անհավատեն

«Երբ Հիսուսը նրա տանը սեղան էր նստել, ահա շատ մաքսավորներ ու մեղավորներ եկան բազմեցին Հիսուսի և նրա աշակերտների հետ: Փարիսեցիները, տեսնելով նրա աշակերտներին, ասացին. «Ինչո՞ւ է ձեր վարդապետը մաքսավորների ու մեղավորների հետ ուտում»: Բայց երբ Հիսուսը լսեց, նրանց ասաց. «Առողջները բժշկի կարիք չունեն, այլ հիվանդները: Գնացեք սովորե՛ք, թե ի՛նչ է նշանակում "Ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ". որովհետև ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ մեղավորներին:» Մատթեոս 9:10-13

3. Զգուշությամբ ընտրիր խոսքերդ

«Ձեր խոսքը միշտ թող շնորհով՝ ինչպես աղով համեմված լինի, որպեսզի գիտենաք, թե ինչպե՛ս է արժան ձեզնից յուրաքանչյուրին պատասխանել:» Կողոսացիս 4:6

«Վերուստ տրված իմաստությունը նախ սուրբ է, ապա խաղաղարար, հեզ, հաշտվող, ողորմությամբ ու բարի պտուղներով լի, անկողմնակալ, անկեղծ:» Հակոբոս 3:17

4. Ավելի կարևորություն տուր մարդկանց փրկությանը, քան օրենքները պահելուն

«Վա՛յ ձեզ՝... փարիսեցիներիդ, որ ... տասանորդը տալիս եք, բայց չեք պահում օրենքի ամենից ծանրակշիռ կետերը՝ արդարությունը, ողորմությունն ու հավատը. դրանք պետք էր կատարել, մյուսներն էլ՝ պահել:» Մատթեոս 23:23

Որտե՞ղ պետք է լինել ողորմության ներկայացուցիչ

1. Փնտրիր դժվարության մեջ եղող մարդկանց և լսիր նրանց

«Միմյանց բեռը կրե՛ք և այսպես Քրիստոսի օրենքը կատարե՛ք:» Գաղատացիս 6:2

2. Փնտրիր կարիքավոր մարդկանց և օգնիր նրանց

«Մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի բարին գործելու մեջ՝ նրան ամրապնդելու համար: Որովհետև Քրիստոսն էլ ոչ թե ինքն իրեն հաճելի եղավ, այլ ինչպես որ գրված է. «Քեզ նախատողների նախատինքներն ինձ վրա ընկան:» Հռովմայեցիս 15:2-3

3. Փնտրիր սգավոր մարդկանց և մխիթարիր նրանց

«Աստված մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են ա՛յն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց:» Բ Կորնթացիս 1:3-4

4. Փնտրիր ընկերոջ կարիք ունեցող մարդկանց և հյուրընկալիր նրանց

«Հյուրասիրության հետևեք:» Հռովմայեցիս 12:13

«Օտար էի, և ինձ ձեզ մոտ ընդունեցիք:» Մատթեոս 25:35

5. Փնտրիր երկրորդ շանսի կարիք ունեցող մարդկանց

«Ներեք ու մխիթարեք նրան, որպեսզի այդպիսին սաստիկ տրտմության մեջ չընկղմվի:» Բ Կորնթացիս 2:7

6. Փնտրիր կոպիտ մարդկանց և բարի եղիր նրանց հանդեպ

«Չարի դիմաց չար մի՛ հատուցեք կամ բամբասանքի դիմաց՝ բամբասանք, այլ ընդհակառակը, օրհնե՛ք, որովհետև հենց նրա համար եք կանչվել, որ օրհնությունը ժառանգեք:» Ա Պետրոս 3:9

«Աստված անարդար չէ, որ մոռանա ձեր գործերը և այն սերը, որ նրա անվան հանդեպ ցուցաբերեցիք՝ ծառայելով սրբերին, որոնց հիմա էլ ծառայում եք:» Եբրայեցիս 6:10